Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԵԾԱՐՄԱՆ
ԵՐԵԿՈՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ. ՑՈՒՑԱԴՐՎՈՒՄ Է
ՏԵՐ ԵՂԻՇԵԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՖԻԼՄԸ

Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայ Եկեղեցու ավագագույն և վաստակաշատ հոգևորականներից Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանին: Երեկոն հանդիսապետում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

«Սիրելի Տեր Հայր, Դուք ունեք զավակներ, բայց ունեք նաև հարյուրավոր զավակներ, որոնք ներկա են այստեղ և որոնք իրենց ծառայությունն են բերում աշխարհով մեկ սփռված մեր հայ համայնքներում: Այդ զավակներիս կյանքի մեջ Դուք մեծ դեր և նպաստ ունեք, և մենք մինչև մեր կյանքի վերջին օրերը կհիշենք այն քաղցր զրույցներն ու խրատները, որ երբեք չեք խնայել և բաշխել եք մեզ հայրաբար, ծնողաբար»,- բացելով հանդիսությունը՝ ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վրդ. Նանյանը:

Հուզումնառատ այդ երեկոյին իր սրտի խոսքն ասաց նաև մեծարյալը՝ իր հերթին կարևորելով այն բարձր արժեքները, որ ստացել է մեր Եկեղեցու Հայրապետներից և այլ արժանավոր եկեղեցականներից, ապա մասնավոր շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նկատմամբ մշտապես ցուցաբերած հոգատարության և արդյունաշատ ուշադրության համար. «Գևորգյան Հոգևոր Ճեմարանը կոչված է ազգային-եկեղեցական ասպարեզի համար հասցնելու ըստ ամենայնի պատրաստված եկեղեցականություն, որ վառ մնան հայ կյանքի մեջ ազգային կրոնական զգացմունքները, որ ապագայի մեր եկեղեցականների գիտակցության և հոգու մեջ համազոր ընթանա ու զարգանա մարդասիրությունը, ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը՝ քրիստոնեական բարձր արժեքները»,- նշեց Տեր Հայրն իր խոսքում:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի խոսքով: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Տեր Եղիշեի՝ 77 տարիներից 55-ը Հայ Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին բերած ծառայության բազմարդյուն և բեղուն վաստակը. «*Քաջ իմանալով Տեր Եղիշեի 55 տարիների ծառայական կյանքը՝ վստահորեն կարող ենք հաստատել, որ նա անմնացորդ նվիրումով է տվել իր կյանքը մեր Եկեղեցուն: Ուր էլ որ եղել է, ինչ պաշտոնի էլ որ նրան նշանակել են, ինչ հանձնարարական էլ որ ունեցել է, կատարել է անմնացորդ սիրով: Սիրով է կատարել, որովհետև մեծ է իր սերը մեր Եկեղեցու և մեր ժողովրդի նկատմամբ*»:

Վեհափառ Հայրապետը նաև ընդգծեց, որ Տեր Եղիշեն, լինելով մեր ավագագույն հոգևորականներից, իր անձով կրողն ու փոխանցողն է Գևորգ Զ Կաթողիկոսով շա-

րունակված մեր երանաշնորհ Հայրապետների ու այլ եկեղեցականների փառապանծ ավանդների: Իր խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանին շնորհեց լանջախաչ:

Երեկոյի ընթացքում ներկայացվեց Տեր Եղիշեի կյանքն ու գործունեությունը, գնահատանքի խոսքեր ասացին ճեմարանի դասախոսներն ու ուսանողները, գեղարվեստական տարբեր կատարումներով հանդես եկան ճեմարանի սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ